



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018 թվականի N 20

#### ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի և 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ *համայնքի ավագանին որոշում է*:

Հաստատել Մեղրաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 23-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը.









1. ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 81 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՄԵՂՐԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՍԵՄԱՃՈՐ ՀԱՍՏՆՔԻ ԿԱՐԿԱԳԱՆ ՍԱՀՆԱՆՍԵՐՈՒՄ ԳՏՆԿՈՒ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆԿՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

-  1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
-  2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
-  3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
-  4. ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ
-  5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
-  6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
-  7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
-  8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ԿԱՌԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 21-Ա

## ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի, 28-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 67-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:
2. Առաջարկել Մեղրաձոր համայնքի ղեկավարին համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկ շաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
3. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կան լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱՐՆՈՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԳՈԳՈՒՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ



*Handwritten signature*

ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿ  
 Մեղրածորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների  
 բաժնով, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքապահերը  
 Աշխատակիցների բաժնակը՝ 33

Վաճառված  
 Մեղրածոր համայնքի  
 ավագանու 2017թ. նոյեմբերի 23-ի N 67-Ա  
 փոփոխությունները 2018 թ. մարտի 23-ի N21 -Ա որոշման

Հ/ի	Հասարչի անվանումը	պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Դաշտոնային դրույքապահը	Հավելումը	Հավելվածը	Աշխատավարձի չափը
1	Համայնքի ղեկավար		1	320 000			320 000
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՇՏՈՆՆԵՐ							
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		2	220 000			440 000
3	Համայնքի ղեկավարի օգնական		1	200 000			200 000
4	Վարչական ղեկավար		4	250 000			1 000 000
ՀԱՄԱՅՐՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՇՏՈՆՆԵՐ							
5	Աշխատակազմի քարտուղար		1	250 000			250 000
6	Գլխավոր մասնագետ		1	225 000			225 000
7	Առաջատար մասնագետ		1	160 000			160 000
8	Առաջատար մասնագետ		1	160 000			160 000
8	Առաջատար մասնագետ		1	160 000			160 000
10	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
11	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
12	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
13	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
14	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
15	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
16	1-ին կարգի մասնագետ		1	140 000			140 000
17	2-րդ կարգի մասնագետ		1	110 000			110 000
18	2-րդ կարգի մասնագետ		1	110 000			110 000
19	2-րդ կարգի մասնագետ		1	110 000			110 000
Տեխնիկական սրբապարհուհու իրավունքային առձևակազմ							
20	Վարորդ		1	120 000			120 000
21	Խակաքարաբար		3	80 000			240 000
22	Կահույք		6	80 000			480 000
	Չնդաններ		33				5 065 000

ՀԱՄԱՅՐՔԻ ՂԵՂԱՎԱՐ





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
«Վ», Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 22

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՅ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՏԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին ներկայացնելու մասնակցության հետևյալ հայտերը՝
  - 1) Մեղրաձոր խոշորացված համայնքի աղբահանության և կոմունալ տնտեսության կազմակերպման համար տեխնիկայի ձեռքբերում:
  - 2) Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում և գործարկում:
2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Կոտայքի մարզպետարան ներկայացնել սոցիալական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2018 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8

Դեմ -0    Ձեռնպահ -0

1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
4. ԳՈԳՈՒՅԱՆ ՀՈՎԻԿ
5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԲԵՆ
8. ՄԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՌԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 23-Ն

ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 70-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» N89-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

Ֆոնդայի բյուջեի եկամտային մաս  
Հատված-3

1.6410 տող 8411 հոդված հողի օտարումից եկամուտներ նախատեսված «<0>> թիվը փոխարինել «<8 765 050>> թվով:

Ֆոնդայի բյուջեի ծախսային մաս

1. Բաժին 01 խումբ 1 դաս 1 տող 1213000՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 սինթետիկ հաշիվ «<1 000 000>> թիվը փոխարինել «<2 000 000>> թվով:

1) 1215000 տող՝ վարչական սարքավորումներ 5122 սինթետիկ հաշիվ «<1 202 600>> թիվը փոխարինել «<3 202 600>> թվով:









2. Բաժին 06 խումբ 3 դաս 1 տող 1213000՝ շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 սինթետիկ հաշիվ «<3 000 000>> թիվը փոխարինել «<4 500 000>> թվով.

3. Բաժին 06 խումբ 4 դաս 1 տող 1213000 շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում՝ 5113 սինթետիկ հաշիվ «<763 600>> թիվը փոխարինել «<2 263 600>> թվով:

4. Բաժին 04 խումբ 2 դաս 1 տող 1213000 ' շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 սինթետիկ հաշիվ <<0>> թիվը փոխարինել <<2 765 050>> թվով:

Կողմ -8

Դեմ -0 Ձեռնպահ -0

-  1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
-  2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
-  3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
-  4. ԳՈԳՈՒՅԱՆ ՀՈՎԻԿ
-  5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
-  6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
-  7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
-  8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 24

**ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N81  
ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.









1. Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրաձոր համայնքի «Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն»-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին » N81 որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

-  1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
-  2. ԲԱՐԵՈՅԱՆ ԱՐՄԵՆ
-  3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
-  4. ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ
-  5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
-  6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
-  7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
-  8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



## ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ 2018թ

Մեղրաձորի մարզամշակութային կենտրոն

### Աշխատակիցների բանակը՝ 14

Հ/հ	Կազմակերպություն ան անվանումը	Հաստիքի անվանումները		Հաստիքի տեսակը	Խաստիքա յին միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելում ը	Հավելում այլը	Աշխատավարձի չափը
		3	4						
1	Մեղրաձորի մարզամշակութային կենտրոն	Տնօրեն			5	6			150 000
2		Չեղմավար			1	100 000			100 000
3		Պրոդյուսեր			1	90 000			90 000
4		Հավաքագր			1	85 000			85 000
5		Չորտրի մարզիչ			1	85 000			85 000
6		Թանգրիտորի մարզիչ			1	85 000			85 000
7		Դիտլի ուսուցիչ			1	85 000			85 000
8		Դուրովի ուսուցիչ			1	85 000			85 000
9		պարի ուսուցիչ			2	85 000			170 000
10		Առե-ընթացործության ուսուցիչ			0,5	80 000			40 000
11		Պահակ			1	78 000			78 000
12		Հավաքագր			1	78 000			78 000
13		Հավաքագր			1	73 000			73 000
	Ընդամենը				1 159 000				1 204 000

Հաստատված է 2017թ. դեկտեմբերի 27-ի N81 որոշման  
Փոփոխությունները Մեղրաձորի մարզի 23-ի N 14 որոշման  
2018 թվականի վերաբերյալ  
Փոփոխությունները Մեղրաձորի մարզի 23-ի N24 որոշման  
2018 թվականի վերաբերյալ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
«Վ», Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԸ  
ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.


1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող հողերը աճուրդ վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակ 1:


2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:


Կողմ -8


Դեմ -0


Ձեռնպահ -0


 1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ


 2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ


 3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

 4. ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ

 5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ

 6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ


 7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

 8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Աղյուսակ 1  
 Մերթաձոր համայնքի ակադաբնու  
 2018թ. մարտի 23-ի N25-Ն որոշման

Հայաստանի Հանրապետության սեփականության համարվող հողերի անուրդ վաճառք

2/2	Գտնվելու վայրը	Ճածկածից	Մակերեսը հա	Նպատակային նշանակությունը	Գործոնական նշանակությունը	Մեկնարկային գինը /ըրամ/	սահմանափակումներ
1	Մերթաձոր համայնք գյուղ Արտավազ	07-017-0195-0028	2.0	գյուղատնտեսական	արտավայր	876000	չկան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՆ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 26-Ն

ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԸ ՄՐԳՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է.**







1.Թույլատրել համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության այլ հողերը մրցույթային կարգով վարձակալության իրավունքով տրամադրել:



2. Սահմանել մրցույթային կարգով վարձակալության իրավունքով տրամադրվող գյուղատնտեսական նշանակության այլ հողերի համար տարեկան վարձավճար՝ համաձայն աղյուսակ 1:

Կողմ -6

Դեմ -2

Ձեռնպահ -0

-  1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
-  2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
-  3. ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ
-  4. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
-  5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
-  6. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

-  1. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
-  2. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԿԱՌԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեղրածոր համայնքի սեփականություն համարվող գյուղիչանակության խողանգերի մրցությանի կարգով վարձակալության  
 իրավունքով

2/2	Գտնվելու վայրը	ճածկացիքը	Մակերեսը հա	Նպատակային նշանակությունը	Գործունական նշանակությունը	Մեկնարկային գինը /դրամ/	սահմանափակումներ
1	Մեղրածոր համայնք գյուղ Մեղրածոր	07-045-0403-0008	0.15	գյուղատնտեսական	այլ նողատնար	3000	չկան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ ՀՈՎԶՆՆՆԻՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՄԱՐՏԻ 2018թվականի N 27-Ն

ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ  
ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ  
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի պահանջով՝  
համայնքի ավագանին որոշում է.









1.Սահմանել Մեղրաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի  
սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և  
դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման  
կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
տասներորդ օրը:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

-  1. ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
-  2. ԲԱՐԽՈՅԱՆ ԱՐՄԵՆ
-  3. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ
-  4. ԳՈԳՈԼՅԱՆ ՀՈՎԻԿ
-  5. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳՆԵԼ
-  6. ՀԱԿՈԲՅԱՆ ՍԱՐԳԻՍ
-  7. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
-  8. ՍԵՓՈՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ՄԵՂՐԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ**

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Մեղրածոր համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):
2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Մեղրածոր համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:
3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:
4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Մեղրածոր համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝
  - 1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
  - 2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
  - 3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
  - 4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,
  - 5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի կամ տիրապետողների վրա:
5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝
  - 1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ամֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը,
  - 2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,
  - 3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար,
  - 4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում,
  - 5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում,
  - 6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:
6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:
7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի



տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

- 1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.
- 2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.
- 3) յոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ.
- 4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.
- 5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Մեղրաձորի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների(մասնագետի) կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Մեղրաձորի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12. Մեղրաձորի համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանումների (մասնագետի) կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14. Մեղրաձոր համայնքի սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխությունը համաձայնեցնում է Մեղրաձորի համայնքապետարանի աշխատակազմի համապատասխան մասնագետների հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.

7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԵՐ



ԳՆՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

**ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿ**  
 Մեղրածորի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների  
 քանակը, հաստիքացուցակը և վաշտոնային դրույքայլափերը  
 Աշխատակիցների քանակը՝ 33

Հավելած  
 Մեղրածոր համայնքի  
 ակազանոշ2017թ տիեմբերի 23 -ի N 67-Ա  
 փոփոխությունները 2018 թ. մարտի 23 -ի N21 -Ա որոշման

Հ/հ	Հաստիքի անվանումը	վաշտոնի ծածկաթիղը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելակցար	Աշխատավարձի չափը
1	3		4	5	6	7	8
<b>ԲԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՆԵՐ</b>							
1	Համայնքի ղեկավար		1	320 000			320 000
<b>ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ ԴԱՇՏՈՒՆԵՐ</b>							
2	Համայնքի ղեկավարի տեղակալ		2	220 000			440 000
3	Համայնքի ղեկավարի օգնական		1	200 000			200 000
4	Վարչական ղեկավար		4	250 000			1 000 000
<b>ՀԱՍԱՅՆԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՆԵՐ</b>							
5	Աշխատակազմի քարտուղար	1.2-1	1	250 000			250 000
6	Գլխավոր մասնագետ	2.3-1	1	225 000			225 000
7	Առաջատար մասնագետ	3.1-1	1	160 000			160 000
8	Առաջատար մասնագետ	3.1-2	1	160 000			160 000
9	Առաջատար մասնագետ		1	160 000			160 000
10	Առաջատար մասնագետ		1	160 000			160 000
11	1-ին կարգի մասնագետ	3.2-1	1	140 000			140 000
12	1-ին կարգի մասնագետ	3.2-2	1	140 000			140 000
13	1-ին կարգի մասնագետ	3.2-3	1	140 000			140 000
14	1-ին կարգի մասնագետ	3.2-4	1	140 000			140 000
15	1-ին կարգի մասնագետ	3.2-5	1	140 000			140 000
16	1-ին կարգի մասնագետ	3.2-6	1	140 000			140 000
17	2-րդ կարգի մասնագետ	3.3-1	1	110 000			110 000
18	2-րդ կարգի մասնագետ	3.3-2	1	110 000			110 000
19	2-րդ կարգի մասնագետ	3.3-3	1	110 000			110 000
<b>Տեխնիկական սրուսարդուհու հոլմաներու աշխատակազմ</b>							
20	Վարորդ		1	120 000			120 000
21	հավաքարար		3	80 000			240 000
22	պահակ		6	80 000			480 000
	ընդամենը		33				5 085 000

ՀԱՍԱՅՆԱԿԱՆ ԴԵԿԱՆԱԿԱՆ

